

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

#### Հարգելի պարոն Աբրահամյան

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Գալուստ Սահակյանի, Կարինե Աճեմյանի, Էդուարդ Շարմազանովի, Մնացական Մնացականյանի, Ռուզաննա Մուրադյանի և Հերմինե Նադդայանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ սկզբունքային առարկություններ չունի:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրված է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱԿԱՎՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման  
ազդեցության գնահատման վերաբերյալ**

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը կամ չընդունումը ՀՀ պետական բյուջեի եկամուտների և ծախսերի փոփոխության չի հանգեցնում (բյուջետային եկամուտների և ծախսերի մասով):

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում**

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի  
նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության  
բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն չի նախատեսվում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ *Նախագիծը վերաբերում է բարձրագույն ուսումնական հաստատությունների ղեկավարների ընտրություններին:*

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին Հայաստանի  
Հանրապետության քրեական օրենքում փոփոխություն կատարելու մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում  
կարգավորման ազդեցության գնահատման**

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին Հայաստանի Հանրապետության քրեական օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է՝

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի /այսուհետ՝ Նախագիծ/ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

Նախագծի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» N 18-Ն որոշման համաձայն:

Նախագիծը սոցիալական պաշտպանության ոլորտում ունի չեզոք ազդեցություն:

### **ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման**

1. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) նախագծի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագծով կատարվող փոփոխությունը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ****«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին**

**Հոդված 1.** «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հոկտեմբերի 23-ի ՀՕ-248 օրենքի 16-րդ հոդվածի 6-րդ մասի «Կրթության մասին» բառերը փոխարինել «Բարձրագույն եւ հետբուհական կրթության մասին» բառերով:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ****«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի նախագծի ընդունման վերաբերյալ**

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի եւ «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի միջեւ անհամապատասխանությունը վերացնելու եւ «Բարձրագույն եւ հետբուհական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հետ ներդաշնակ դարձնելու անհրաժեշտությամբ:

Այսպես, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ «Բարձրագույն ուսումնական հաստատությունների ղեկավարների ընտրություններն իրականացվում են «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան», մինչդեռ, թե ում կողմից սահմանված, որ մարմնում եւ ինչ մրցույթային կարգով, ինչ քվեարկությամբ, ում կողմից է հաստատվում ընտրության արդյունքները, քանի տարով եւ քանի անգամ կարող է անընդմեջ ընտրվել բարձրագույն ուսումնական հաստատության ղեկավարը սահմանված է «Բարձրագույն եւ հետբուհական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, իսկ «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը ընդամենը սահմանում է, որ բարձրագույն ուսումնական հաստատություններում մի շարք պաշտոնների նման, ղեկավարի պաշտոնը նույնպես ընտրովի պաշտոն է: